

ներն են: Համարված արձանագրությունները չեղարկվելու են հայ վիճագիր արձանագրությունների գիժանի համապատասխան պրակի մեջ:

Պրոֆ. Կ. Ղաֆազարյանը մի ամսով գործուղվել է Հոգաբարձին՝ վանքի վիճագիր արձանագրությունները ուսումնասիրելու նպատակով: Այդ ժամանակամիջոցում նա հաշարձանների միայնից քննարկեց և շուրջ 100 արձանագրություն:

1963 թ. պեղումները, ինչպես տեսնում ենք, ավելի բան արդյունավետ են եղել: Հայտնա-

բերված հաշարձանները, հնագիտական հարուստ նյութերը և համարված վիճագիր արձանագրությունները խոշոր արժեք են ներկայացնում հայ ժողովրդի դարավոր պատմության, մշակույթի և արվեստի ուսումնասիրության, ինչպես և հայրենի ժողովուրդների հետ նրա պատմական ու մշակութային կապերը լուսարանելու համար:

Պրոֆ. Բ. Առաքելյան

Հայկական ՄՍՄ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտնական

ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐՅԱՆ ԻՄԱՍԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ՌՈՒՍԵՐԵՆ ԽԱՐԿԻԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայագիտության բնագավառում ծավալվող աշխատանքների մեջ լուրջ ներդրում է հին և միջնադարյան իմաստասիրական երկերի գիտական համահավաք-համեմատական բնագրերի կազմումն ու հրատարակումը՝ ռուսերեն ղուգահեռ թարգմանությամբ:

Հայ իմաստասիրական երկերի ռուսերեն թարգմանությունը բավականին լայն ծավալ առաջավ մեզ մոտ սովետական տարիներին: Մինչև այժմ ռուսերեն են թարգմանվել տարբեր ծավալի ինը աշխատություն, ա) «Հերմեայ Սոմեթի առ Ասկղեպիոս Սահմանը», բ) «Զենոնի իմաստասիրի Յաղագս բնութեան», գ) «Յովհաննու Որոտնեցույ հաւարեալ ի բանից իմաստասիրաց» երկերը հրատարակված են Մատենադարանի «Բանբեր»-ի X 3-ում (1956), գ) «Ըարտասան, յաղագս բնութեան» և ե) «Սահմանը փիլիսոփայական» երկերը՝ Մատենադարանի «Բանբեր»-ի X 5-ում (1960), իսկ առանձին գրքերով՝ զ) «Յովհաննու Որոտնեցույ Վերլուծութիւն Ստորոգութեանց» Արխատտելի» և է) «Յովհաննու Որոտնեցույ համառոտ վերլուծութիւն Պորփիրի գծարարութիցն» (Երկուսը մի գրքում, 1956), բ) Դավիթ Անհաղթի «Սահմանը իմաստասիրութեան» (1960) և թ) «Մեկնութիւն Ստորոգութեանց» Արխատտելի» (1961):

Թարգմանված բնագրերի ստվար մեծամասնությունը արդյունք է հունարան գաղտնի գործունեության: Չեռնամուխ լինելով թարգմանական աշխատանքների, մեր երկրորդ թարգմանիչները բախվում էին լուրջ գծավորության, դասական հայերենը, որը հիմնադրվել էր ձևավորում էր գեղեցիկ գրականություն մեջ արտահայտված ամենարագմերանգ մտքերն ու դադափարները, բավականին ան-

զուր դուրս եկավ գիտական-իմաստասիրական երկեր հորինելու կամ թարգմանելու համար. և դա բացատրվում է ոչ թե կառուցվածքային ներքին նարավորությունների անզարգացածությամբ կամ անճկունությամբ, այլ հիմնականում համապատասխան գիտությունների համար պահանջվող տերմինաբանության ու մասնագիտական սեղմ ու կուռ, ճշգրիտ հասկացությունների ու արտահայտությունների բացակայության հանգամանքով: Եվ դա, անտարակույս, հասկանալի է առաջին անգամ գրի առնվող մատենագրության համար: Կասածից վեր է նաև, որ գիտական-իմաստասիրական երկերի հայերեն թարգմանության վրա ուժեղ դրոշմ է դրել Ալեքսանդրյան գաղտնի մշակած թարգմանական սկզբունքը, ըստ որի, հնարավոր ազավազումներից ու թյուրբերուհումներից խուսափելու համար, պահանջվում էր բառացի նյութական թարգմանություն, եման մոտեցումը հանգեցնում էր թարգմանություն կատարող լեզվի կառուցվածքային-շարահայտական օրինաչափությունների բացահայտ հպատակեցմանը թարգմանվող լեզվին: Այնպես ինչով բացատրել այն հանգամանքը, որ թեև մեր առաջին թարգմանիչները նույնքան շատ թարգմանություններ կատարեցին հունարենից և ասորերենից, բայց հավատարիմ մնացին հայոց լեզվի օրինաչափություններին ու ոգուն. մինչդեռ երկրորդ թարգմանիչների լեզուն հիմնովին և տրամադծորեն հակառակ էր հայոց լեզվի բուն օրինաչափություններին ու խորթ՝ նրա ոգուն: Ոչ միայն իրենց նորաստեղծ բառարարությունների կազմությունը երկրորդ թարգմանիչները լիովին համապատասխանեցրին հունարենի բառարարական կանոններին՝ նախածանցների հարուստ համակարգով, այլև շարահյուսու-

թյան օրինաչափությունները՝ համաձայնություններն ու խնդրառությունները, շարադասական նորմաները ամբողջովին ենթարկեցին հունարենին։ Սա իրոր մի հեղաշրջում էր մեր մատենագրության լեզվի զարգացման մեջ՝ իր թև՝ դրական և թև՝ բացասական հետևանքներով։

Իրականն այն էր, որ հունարենի հարուստ նախածանցների ու բառակերտման եղանակների նմանողությամբ հայերենի բառակազմական հնարավորությունները արտակարգորեն աճեցին՝ ի վիճակի դառնալով արտահայտելու ամենաբարդ ու ամենավերացական գաղափարներ ու հասկացություններ. ստեղծվեցին մասնագիտական զարմանալի առատ տերմիններ ու արտահայտություններ, լեզուն ձեռք բերեց գիտական սեղմությամբ ու ճշգրտությամբ մասնագիտական շարադրանքներ ստեղծելու հնարավորություն. ուստի և հունարեն հայերենի շնորհիվ բնդարձակվեց նաև մեր մատենագրության առարկայական թեմատիկան՝ լինդգրկելով միջնադարյան գիտության բոլոր բնագավառներն ու ճյուղերը, որով մեր դարավորությունը դարձավ առավել լայնապարփակ ու բազմաբովանդակ։

Բացասականն այն էր, որ հունարենի կառուցվածքային առանձնահատկությունների պատճենավորումով խիստ ալլափոխվեց այդ շրջանի մեր գրական լեզուն, լեզվական տեղակետից այդ բնույթի թարգմանությունները անձանաշելիորեն հեռացան դասական հայերենից. այնպես որ նույնիսկ ներկայիս քաջ պարարագետի համար դրանց վերծանումն ու մեկնաբանումը, առանց հունարենի իմացության և համապատասխան մասնագիտական հմտության, չափազանց դժվարին է, եթե ոչ անհնարին։ Եուցե դա է եղել պատճառը, որ այդ բնույթի երկերի լեզվական առանձնահատկությունների ուսումնասիրմամբ շատ ուշ է սկսում զբաղվել հայ բանասիրությունը Պրոֆ. Ն. Աղունցի՝ «Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնությունը նորին» (Պետրոգրադ, 1915) և ակադ. Մանանդյանի՝ «Հունարեն գրությունը և նրա զարգացման շրջանները» (Վիեննա, 1928) մեծարժեք աշխատություններով հիմք է դրվում մեր մատենագրության պատմության այդ յուրօրինակ դրական շարժման համակողմանի քննության և հետազոտության։ Բոկ այդ բնագրերի ուսերեն թարգմանությունը միայն վերջերս է հնարավոր դարձել։

Իստական մեծ նետարբերություն է ներկայացնում ակադ. Մանանդյանի կազմած «Հերմեայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանը» համահավաք բնագրի ուսերեն թարգ-

մանությունը փիլիսոփայական գիտությունների թեկնածու Սեն Արևշատյանի կողմից։ Սույն աշխատությունը ուշագրավ է նրանով, որ լինելով կրոնա-իմաստասիրական բնույթի ստեղծագործություն, պահպանվել է միայն հայերենով, իսկ նրա հունարեն բնագիրը կորել է։ Այդ պատճառով էլ հայերեն տարբերակի նշանակությունը անհամեմատ մեծ է։ Մանանդյանի կարծիքով՝ այս երկը իր լեզվական առանձնահատկություններով պատկանում է հունարեն թարգմանությունների երկրորդ խմբին, որի մեջ մտնում են «Տիմոթևոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակածառութիւնը» և Յամրդիկոսի խմբի արիստոտելյան երկերը¹։ Մյուս կողմից՝ սույն աշխատության ազդեցությունը հայ միջնադարյան փիլիսոփայական գրականության վրա, մասնագետների պնդմամբ, անվիճելի է։ Հրատարակված աշխատությունը ունի նաև ակադ. Մանանդյանի առաջաբանը։

Ս. Արևշատյանը հրատարակել է նաև համաշխարհային փիլիսոփայական մտքի պատմության համար կարևոր նշանակություն ունեցող Զենոն Իմաստասերի «Յաղագս քնութեան» երկի ռուսերեն թարգմանությունը («Բանբեր», 1956, № 3, էջ 315—342)՝ առաջաբանով հանդերձ։ Օտար ազդյուններից Զենոն Իմաստասերի աշխատության մասին գիտությունը հայտնի են միայն առանձին գրությունների քաղվածքներ տարբեր հեղինակների մոտ վերաշարադրված ձևով։ Զենոնի «Յաղագս քնութեան» աշխատությունը համառոտ և բնդարձակ տարբերակներով պահպանվել է միայն հայ մատենագրության մեջ։ Ընդարձակ տարբերակը, վերնագիր շունենալով, երկար ժամանակ անհայտության մեջ է մնացել։ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է. հաշիկյանին 1949 թ. հաջողվում է հայտնաբերել այն և կազմել համահավաք-համեմատական բնագիր՝ Մատենագրաբանում առկա համառոտ տարբերակի երեք այլ ձևագրերի օգնությամբ, և համապատասխան առաջաբանով հրատարակել Մատենագրանի «Գիտական նյութերի ժողովածու»-ի II համարում (1949, էջ 65—98)։ Սույն աշխատության հունարենից կատարված հայերեն թարգմանության ժամանակաշրջանը, ելնելով ակադ. Հ. Մանանդյանի տված պարբերացումից և լեզվական իրողությունների իր սեփական դիտողություններից, է. հաշիկյանը վերադրում է հունարեն գրությունը գործունեության

¹ Տե՛ս «Բանբեր Մատենագրանի», 1956, № 3, էջ 290։

Յերրորդ շրջանին (VI դարի վերջը և VII դարի սկիզբը)²:

Նույն ժամանակաշրջանի հունարան դրպորցի թարգմանչական գործունեության արդյունք են նաև անանուն հեղինակների «Ճարտասան, յաղագս բնութեան» և «Սահմանը փիլիսոփայական» վերնագրերը կրող աշխատությունները, որոնք հատվածաբար հասել են մեզ: Սրանք առանձնահատուկ բնույթի երկեր են, որոնք միջնադարում ծառայել են իրեր հունական փիլիսոփայության դասագիրք: Այդ երկերի համահավաք-համեմատական բնագրերը, նրանց ուսերեն թարգմանությունը, մասնագիտական առաջարկով միասին, հրատարակել է Ս. Արևշատյանը Մատենադարանի «Բանբեր»-ի № 5-ում (1960, էջ 371—392):

Մեզ թվում է, որ «Բանբեր»-ի տարրեր համարներում լույս տեսած բնագրերն ու նրանց ուսերեն թարգմանությունը ավելի նպատակահարմար կլինեին ամփոփել առանձին գրքում և այդպես ներկայացնել դրանք գիտական հասարակայնությանը: Դրան պետք է ձեռնամուխ լինել՝ երևելով այդ բնագրերի կարևորությունից և համաշխարհային փիլիսոփայական մտքի պատմության վրա նրանց ունեցած անդրադարձումից:

1960 թ. ՀՍՍՌ ԿԱ հրատարակչությունը լույս բնծայեց Ս. Արևշատյանի պատրաստած «Դավիթ Անյաղթ, Սահմանը իմաստասիրութեան» աշխատությունը առաջարկով, համահավաք բնական բնագրով ու զուգահեռ ուսերեն թարգմանությամբ, ինչպես նաև ծանոթագրություններով: Աշխատության առաջարանից պարզվում է, որ ուսերեն թարգմանության առաջին տարրերակը հեղինակը կատարել է դեռևս 1951 թ., սակայն այն չամարել է անրավարար, քանի որ իր ձեռքի տակ չի ունեցել «Սահմանքի» բնական համահավաք բնագիրը և թարգմանության համար հիմք է բնորոշում եղել միայն 1833 թ. վենետիկյան հրատարակչությունը («Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի և Դավիթ Անյաղթի Մատենագրութիւնք»): Այդ պատճառով էլ Մատենագրարանում գտնվող բնութրոյի հինգ ձեռագրերի հիման վրա պատրաստած բնական համահավաք բնագրից հեղինակը կատարել է նոր թարգմանություն, երբ ձեռագրական տարբերությունների օգնությամբ ստուգվել, ճշտվել և վերականգնվել են բազմաթիվ ձևակերպումներ ու բառեր:

Առաջարկում բնութագրվում է V դարի վերջում և VI դարի սկզբում ստրած հայ փի-

լիսոփայական մտքի կարկառուն ներկայացուցիչ՝ Դավիթ Անհաղթի գիտական ժառանգությունը, բնորոշումը և հիմնական գծերով վերլուծվում և արժեքավորվում են հրատարակվող բնագրի տեսական դրույթները, ցույց է տրվում այդ երկի թողած ազդեցությունը հայ միջնադարյան փիլիսոփայության պատմության վրա, պատշաճ արժեքավորումով գնահատվում և վեր է հանվում բնական բանասիրության ծառայությունը Դավիթ Անհաղթի անվան հետ կապված բազմաթիվ փիլիսոփայական երկերի սովորական վերագրումների պարզաբանման ուղղությամբ:

Մյուս առավել խոշոր փիլիսոփայական աշխատությունը, որ միայն վերջերս լույս տեսավ, կրում է «Անանուն մեկնութիւն «Ստորագութեանց» Արիստոտելի» վերնագիրը: Ուշագրավ է, որ սույն երկը իր բնույթով ու նշանակությամբ մեծ անդրադարձումներ է ունեցել միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի վրա: Դրա կարևորությունն ու հրատապությունը այնքան ակնհայտ է եղել անցյալում, որ կարիք է զգացվել մի շարք անգամներ կրկին մեկնությունների ենթարկելու այդ երկը: Այս մեկնության առավելությունը բնորոշվում է նաև նրանով, որ բովանդակում է Արիստոտելի «Կատեգորիաների» («Ստորագութեանց») ամբողջությունը, որից յուրաքանչյուր հատված բերվում է սկզբում և ապա մեկնվում: Այսպիսով, շնորհիվ այդ համահավաքի, պահպանված է լինում նաև Արիստոտելի վերահիշյալ աշխատության դեռևս VI դարում հունարենից թարգմանված հայերեն տարրերակը: Ինչից դրանից, սույն աշխատությունը համարվում է Արիստոտելի «Կատեգորիաների» հնագույն մեկնություններից մեկը, որի բնական բնագրի կազմումն ու ուսերեն զուգահեռ հրատարակումը բացառիկ նշանակություն ունի համաշխարհային փիլիսոփայական մտքի պատմության, ինչպես և Արիստոտելի սույն երկի բանասիրական ճշտումների ու վերականգնումների համար:

Թեև ունենք այս մեկնության վենետիկյան հրատարակությունը («Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի և Դավիթ Անյաղթի Մատենագրութիւնք», 1833), բայց այն արտատպված է թերի, սխալաշատ և պակասավոր մի ձեռագրից: Առաջին անգամ սովետական տարիներին է, որ գիտական լայն հասարակայնության սեփականություն է դարձվում հիշյալ երկի բնական ամբողջական բնագիրը Մատենադարանում գտնվող հնագույն և արժեքավոր հինգ ձեռագրերի համեմատությամբ: Աշխատության պատմա-փիլիսոփայական առաջարանը պատկանում է փիլիսոփայական

² Տե՛ս Մատենադարանի Երևանյան նյութերի ժողովածու, 1949, № 2, էջ 76:

գիտությունների դոկտոր Վ. Չալոյանին, քննական ընագիրը կազմել են Վ. Չալոյանն ու Մատենադարանի աշխատակից Ս. Լալաֆարյանը, իսկ ռուսերեն թարգմանությունն ու ծանոթագրությունները՝ Ս. Արևշատյանը:

Առաջարանում գրված, Չալոյանի քննում էրանասիրության նվաճումները Արիստոտելի «Կատեգորիաների» մեկնության վերաբերյալ, անդրադառնում Մեկնության թարգմանչի (ըստ իրեն՝ հեղինակի) անձնավորության, ժամանակի և տեղի հարցերին, շարադրում Մեկնության հիմնական դրույթները և ներկայացնում Անանուն մեկնիչի աշխարհայացքային ընդհանուր գծերը, վերջում նկարագրելով քննական ընագրի հիմքում ընկած ձեռագրերը:

Թարգմանիչը ընագրի տարրնթերցումները համեմատության մեջ է դրել Ա. Կուրիցկու կատարած ռուսերեն թարգմանության հետ (Մոսկվա, Սոցկզգիզ, 1939), բնդ որում հունարենի հետ հայերեն ընագրի կարևորագույն տարրնթերցումների մատնանշման գուգահեռ, ծանոթագրություններում նա ցուցադրում է նաև հայերեն տարրնթերցումները՝ Ա. Կուրիցկու ռուսերեն թարգմանության նկատմամբ: Եա բանասիրական արժեքավոր և խիստ պատասխանատու աշխատանք է, որի նախաձեռնությունը պատկանում է Ֆ. Կոնիբերին: Վերջինս հայերեն ձեռագրերի տված տարրնթերցումները համեմատել և բանասիրական լուրջ դիտողություններ է կատարել հունարեն տեքստի նկատմամբ:

Հետ-հունարան հայերենով գրված ընագրերի ռուսերեն թարգմանություններն են՝ Հովհան Որոտնեցու իմաստասիրական երեք երկերը. ա) «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց», բ) «Վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտելի» և գ) «Համառօտ վերլուծութիւն Պորփիրի դժուարալուծիցն»: Առաջին ընագրի թարգմանությունը պատկանում է Ս. Արևշատյանին («Բանբեր Մատենադարանի», Ա՝ 3, էջ 343—386), վերջին երկուսինը՝ Վ. Չալոյանին և պրոֆ. Ա. Լեղամյանին (երկու աշխատությունները միասին ամփոփված են մի գրքում՝ «Յովհաննու Որոտնեցու Վերլուծութիւն ստորոգութեանց Արիստոտելի» վերնագրով, խմբագրությունը Ս. Արևշատյանի, Երևան, 1956):

Պետք է նկատել, որ այս ընագրերը անհամեմատ պարզ գրաբարով են շարադրված, նրանց տերմինաբանությունը առավել կայուն է, իմաստասիրական հասկացություններն ու մտքերը ձևակերպված են առավել որոշակիությամբ ու աներկղիմությամբ: Նման ընագրերի թարգմանությունը համեմատաբար հեշտանում է, քանի որ նրանցում հունարան հայերենով մեզ հասած անտիկ և հայ միջնադարյան փիլիսոփալական երկերի խթնաբանությունը հիմնականում հաղթահարված է, արդեն իսկ վերծանված են իմաստասիրական կարևորագույն դրույթներն ու հարցադրումները, բացահայտված են տերմինների ու մասնագիտական բառակապակցական արտահայտությունների բովանդակությունը և այլն, և այլն:

Անտիկ և հայ միջնադարյան իմաստասիրական երկերի ռուսերեն թարգմանությունների մասին ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հունարան հայերենով գրված փիլիսոփայական երկերի ռուսերեն թարգմանության շնորհիվ բացահայտված և վերծանված են մեզ հասած բարդ և խթին ոճով շարադրված ընագրերը: Այդ պատճառով էլ ոչ միայն լայն շրջանառության մեջ են մտնում անտիկ և հայ միջնադարյան իմաստասիրական երկերը, այլև դրանք դադարում են մեռյալ միավորներ լինելուց, նպաստելով հայագիտության տարրեր մարգերում տեսական այս կամ այն հարցը լուսաբանելու խնդրին: Դրան օժանդակում է այն, որ թարգմանված յուրաքանչյուր ընագիր օժտված է համապատասխան առաջաբանով, բանասիրական բնույթի դիտողություններով ու ծանոթագրություններով:

Անտիկ և հայ միջնադարյան փիլիսոփայական երկերի՝ Սովետական Հայաստանում կատարված ռուսերեն թարգմանությունը, անտարակույս, նշանակալի ավանդ է հայագիտության կարևոր մի ընագավառի ուսումնասիրման ու հետազոտման և հայագիտական մտքի լավագույն դրսևորումներին ու արժեքներին միջազգային ճանաչում տալու գործում:

Լ. ԽԱՉԵՐՅԱՆ